**Երկրորդ ընթերցում**
**Լրամշակված նախագիծ**

**Կ-1068-12.05.2025, 16.06.2025-ՊԱ-011**

# *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ*

# *ՕՐԵՆՔԸ*

## *«ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

***Հոդված 1.*** «Ոստիկանությունում ծառայության մասին» 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-401-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Ոստիկանությունում ծառայության կարող է անցնել Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած (բացառությամբ Լիազոր մարմնի ուսումնական հաստատության իգական սեռի դիմորդների) այն քաղաքացին, որը՝

1) անցել է պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ իգական սեռի քաղաքացիների եւ «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքով սահմանված կարգով զինվորական ծառայությունից ազատվելու դեպքերի).

2) տիրապետում է հայերենին եւ իր անձնական հատկանիշներով, գործնական կարողություններով, կրթությամբ, ֆիզիկական պատրաստականությամբ եւ առողջական վիճակով կարող է կատարել ոստիկանության գործառույթները:».

2) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

***Հոդված 2.*** Օրենքի 14-րդ հոդվածում՝

1) 6-րդ մասը «հատկապես կարեւոր գործերով ավագ քրեական ոստիկանի» բառերից հետո լրացնել «, համայնքային ոստիկանի, ավագ համայնքային ոստիկանի եւ հատկապես կարեւոր գործերով ավագ համայնքային ոստիկանի» բառերով.

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 6.3-րդ մասով.

«6.3. Համայնքային ոստիկանի պաշտոնում կարող են նշանակվել միայն այն անձինք, որոնք ունեն առնվազն բակալավրի որակավորում եւ Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում ստացել են համայնքային ոստիկանի արհեստագործական կրթություն: Ոստիկանության ստորաբաժանումների՝ առնվազն բակալավրի որակավորում ունեցող ծառայողների նշանակումը համայնքային ոստիկանության միջին, ավագ կամ գլխավոր խմբերի պաշտոններում կատարվում է միայն Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում վերապատրաստման դասընթացն ավարտելուց հետո:»:

***Հոդված 3.*** Օրենքի 14-րդ հոդվածի 6.1-ին, 6.2-րդ, 8-րդ մասերում, 40-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում, 55-րդ հոդվածի 10-րդ մասում, 55.1-ին հոդվածի 1-ին, 5-րդ եւ 6-րդ մասերում «նախնական մասնագիտական» բառերը փոխարինել «արհեստագործական» բառով, իսկ 55-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերում «նախնական» բառը փոխարինել «արհեստագործական» բառով:

***Հոդված 4.*** Օրենքի 15-րդ հոդվածի 7-րդ մասում «վեց» բառը փոխարինել «երկու» բառով, իսկ «վեցամսյա» բառը փոխարինել «երկամսյա» բառով:

***Հոդված 5.*** Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7) լինել որևէ կուսակցության, հասարակական-քաղաքական, հասարակական միավորման (բացառությամբ գիտական, մշակութային, մարզական, որսորդական, վետերանների և նմանօրինակ շահերի ընդհանրության հիման վրա միավորված կազմակերպությունների, ինչպես նաև արհեստակցական և կրոնական կազմակերպությունների) անդամ, իր ծառայողական դիրքն օգտագործել կուսակցությունների, հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումների շահերի, նրանց նկատմամբ վերաբերմունք քարոզելու համար, ինչպես նաև իր ծառայողական պարտականությունները կատարելիս այլ քաղաքական կամ կրոնական գործունեություն իրականացնել.»:

***Հոդված 6.*** Օրենքի 47-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի աղյուսակի՝

ա. վերջին տողի առաջին և երկրորդ սյունակները հանել.

բ. երրորդ սյունակը հանել.

2) 3-րդ մասի «խմբի պաշտոն զբաղեցնող եւ ոստիկանության բարձրագույն կոչում ունեցող» բառերը փոխարինել «, ավագ, միջին եւ կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող» բառերով.

3) 3-րդ մասից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3.1-ին մաս.

«3.1. Ոստիկանության ծառայողի ծառայության ժամկետը կարող է երկարաձգվել սույն հոդվածով նախատեսված տարիքային շեմից մինչեւ 5 տարի ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ՝ 1 տարի ժամկետով, եթե տվյալ ծառայողն իր անձնական հատկանիշներով, գործնական կարողություններով եւ առողջական վիճակով կարող է կատարել ոստիկանության գործառույթները:».

4) 5-րդ մասի աղյուսակի երկրորդ տողի երկրորդ սյունակում «62» թիվը փոխարինել «60» թվով:

***Հոդված 7.*** Օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի վերջին նախադասությունում «դրույքաչափը» բառից հետո լրացնել «, իսկ սույն օրենքի 15-րդ հոդվածով նախատեսված

ատեստավորումից դրական եզրակացություն ստացած լինելու դեպքում՝ նաև ատեստավորման արդյունքներով հաշվարկվող հավելավճարը, բայց ոչ ավելի, քան այդ հավելավճարի հաշվարկման ժամկետի ավարտը» բառերը:

***Հոդված 8.*** Օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ նախադասություններից հանել «, բայց ոչ ավելի, քան 3 ամսվա համար» բառերը:

***Հոդված 9.***

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված պայմանը կիրառելի է միայն Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում համայնքային ոստիկանի արհեստագործական կրթություն ստացած առաջին հոսքի շրջանավարտների նկատմամբ, որոնց շնորհվում է առնվազն ոստիկանության լեյտենանտի կոչում, ինչպես նաեւ Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում վերապատրաստման դասընթացն ավարտած եւ համայնքային ոստիկանության միջին, ավագ կամ գլխավոր խմբերի պաշտոններում նշանակվող ոստիկանության ծառայողների նկատմամբ: Այդ շրջանավարտները եւ ծառայողները համարվում են հավելավճար նախատեսող ատեստավորում անցած: Մինչեւ համայնքային ոստիկանության միջին, ավագ կամ գլխավոր խմբերի պաշտոններում նշանակվելը ատեստավորում անցած ծառայողների ատեստավորման արդյունքները պահպանվում են մինչեւ համայնքային ոստիկանության համապատասխան խմբերի պաշտոններում նշանակվելը:

3. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված պայմանը չի տարածվում Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում պետական պատվերի շրջանակում «Իրավագիտության բակալավր» որակավորում ստացած այն շրջանավարտների վրա, որոնք նշված որակավորումն ստացել են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո:

4. Սույն օրենքի 4-րդ հոդվածի գործողությունը տարածվում է նաեւ մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը ոստիկանությունում առաջին անգամ պաշտոնի նշանակված ոստիկանության ծառայողների վրա:

5. Սույն օրենքի 7-րդ հոդվածը տարածվում է 2025 թվականի մայիսի 1-ից հետո ոստիկանության կադրերի գործող ռեզերվում գրանցված ոստիկանության ծառայողների վրա:

6. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ 60 տարին լրացած, ոստիկանության գլխավոր խմբի պաշտոն զբաղեցնող և ոստիկանության բարձրագույն կոչում չունեցող ծառայողները շարունակում են պաշտոնավարել մինչև 62 տարին լրանալը, որից հետո նրանց ծառայության ժամկետը կարող է երկարաձգվել «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 47-րդ հոդվածի 3.1-ին մասին համապատասխան, բայց ոչ ավելի, քան մինչև 3 անգամ:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ՕՐԵՆՔԸ

# «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** «Ոստիկանությունում ծառայության մասին» 2002 թվականի հուլիսի 3-ի ՀՕ-401-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Ոստիկանությունում ծառայության կարող է անցնել Հայաստանի Հանրապետության 18 տարին լրացած (բացառությամբ Լիազոր մարմնի ուսումնական հաստատության իգական սեռի դիմորդների) այն քաղաքացին, որը՝

1) անցել է պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ իգական սեռի քաղաքացիների եւ «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքով սահմանված կարգով զինվորական ծառայությունից ազատվելու դեպքերի).

2) տիրապետում է հայերենին եւ իր անձնական հատկանիշներով, գործնական կարողություններով, կրթությամբ, ֆիզիկական պատրաստականությամբ եւ առողջական վիճակով կարող է կատարել ոստիկանության գործառույթները:».

2) 2-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

***Հոդված 2.*** Օրենքի 14-րդ հոդվածում՝

1) 6-րդ մասը «հատկապես կարեւոր գործերով ավագ քրեական ոստիկանի» բառերից հետո լրացնել «, համայնքային ոստիկանի, ավագ համայնքային ոստիկանի եւ հատկապես կարեւոր գործերով ավագ համայնքային ոստիկանի» բառերով.

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ 6.3-րդ մասով.

«6.3. Համայնքային ոստիկանի պաշտոնում կարող են նշանակվել միայն այն անձինք, որոնք ունեն առնվազն բակալավրի որակավորում եւ Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում ստացել են համայնքային ոստիկանի արհեստագործական կրթություն: Ոստիկանության ստորաբաժանումների՝ առնվազն բակալավրի որակավորում ունեցող ծառայողների նշանակումը համայնքային ոստիկանության միջին, ավագ կամ գլխավոր խմբերի պաշտոններում կատարվում է միայն Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում վերապատրաստման դասընթացն ավարտելուց հետո:»:

***Հոդված 3.*** Օրենքի 14-րդ հոդվածի 6.1-ին, 6.2-րդ, 8-րդ մասերում, 40-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում, 55-րդ հոդվածի 10-րդ մասում, 55.1-ին հոդվածի 1-ին, 5-րդ եւ 6-րդ մասերում «նախնական մասնագիտական» բառերը փոխարինել «արհեստագործական» բառով, իսկ 55-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերում «նախնական» բառը փոխարինել «արհեստագործական» բառով:

***Հոդված 4.*** Օրենքի 15-րդ հոդվածի 7-րդ մասում «վեց» բառը փոխարինել «երկու» բառով, իսկ «վեցամսյա» բառը փոխարինել «երկամսյա» բառով:

***Հոդված 5.*** Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7) լինել որևէ կուսակցության, հասարակական-քաղաքական, հասարակական միավորման (բացառությամբ գիտական, մշակութային, մարզական, որսորդական, վետերանների և նմանօրինակ շահերի ընդհանրության հիման վրա միավորված կազմակերպությունների, ինչպես նաև արհեստակցական և կրոնական կազմակերպությունների) անդամ, իր ծառայողական դիրքն օգտագործել կուսակցությունների, հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումների շահերի, նրանց նկատմամբ վերաբերմունք քարոզելու համար, ինչպես նաև իր ծառայողական պարտականությունները կատարելիս այլ քաղաքական կամ կրոնական գործունեություն իրականացնել.»:

***Հոդված 6.*** Օրենքի 47-րդ հոդվածում՝

1) 1-ին մասի աղյուսակի՝

ա. վերջին տողի առաջին և երկրորդ սյունակները հանել.

բ. երրորդ սյունակը հանել.

2) 3-րդ մասի «խմբի պաշտոն զբաղեցնող եւ ոստիկանության բարձրագույն կոչում ունեցող» բառերը փոխարինել «, ավագ, միջին եւ կրտսեր խմբերի պաշտոններ զբաղեցնող» բառերով.

3) 3-րդ մասից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3.1-ին մաս.

«3.1. Ոստիկանության ծառայողի ծառայության ժամկետը կարող է երկարաձգվել սույն հոդվածով նախատեսված տարիքային շեմից մինչեւ 5 տարի ժամկետով՝ յուրաքանչյուր անգամ՝ 1 տարի ժամկետով, եթե տվյալ ծառայողն իր անձնական հատկանիշներով, գործնական կարողություններով եւ առողջական վիճակով կարող է կատարել ոստիկանության գործառույթները:».

4) 5-րդ մասի աղյուսակի երկրորդ տողի երկրորդ սյունակում «62» թիվը փոխարինել «60» թվով:

***Հոդված 7.*** Օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի վերջին նախադասությունում «դրույքաչափը» բառից հետո լրացնել «, իսկ սույն օրենքի 15-րդ հոդվածով նախատեսված

ատեստավորումից դրական եզրակացություն ստացած լինելու դեպքում՝ նաև ատեստավորման արդյունքներով հաշվարկվող հավելավճարը, բայց ոչ ավելի, քան այդ հավելավճարի հաշվարկման ժամկետի ավարտը» բառերը:

**Հոդված ~~68~~.** Օրենքի 52-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ նախադասություններից հանել «, բայց ոչ ավելի, քան 3 ամսվա համար» բառերը:

***Հոդված ~~79~~.***

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված պայմանը կիրառելի է միայն Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում համայնքային ոստիկանի արհեստագործական կրթություն ստացած առաջին հոսքի շրջանավարտների նկատմամբ, որոնց շնորհվում է առնվազն ոստիկանության լեյտենանտի կոչում, ինչպես նաեւ Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում վերապատրաստման դասընթացն ավարտած եւ համայնքային ոստիկանության միջին, ավագ կամ գլխավոր խմբերի պաշտոններում նշանակվող ոստիկանության ծառայողների նկատմամբ: Այդ շրջանավարտները եւ ծառայողները համարվում են հավելավճար նախատեսող ատեստավորում անցած: Մինչեւ համայնքային ոստիկանության միջին, ավագ կամ գլխավոր խմբերի պաշտոններում նշանակվելը ատեստավորում անցած ծառայողների ատեստավորման արդյունքները պահպանվում են մինչեւ համայնքային ոստիկանության համապատասխան խմբերի պաշտոններում նշանակվելը:

3. Սույն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված պայմանը չի տարածվում Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում պետական պատվերի շրջանակում «Իրավագիտության բակալավր» որակավորում ստացած այն շրջանավարտների վրա, որոնք նշված որակավորումն ստացել են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո:

4. Սույն օրենքի 4-րդ հոդվածի գործողությունը տարածվում է նաեւ մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը ոստիկանությունում առաջին անգամ պաշտոնի նշանակված ոստիկանության ծառայողների վրա:

5. Սույն օրենքի 7-րդ հոդվածը տարածվում է 2025 թվականի մայիսի 1-ից հետո ոստիկանության կադրերի գործող ռեզերվում գրանցված ոստիկանության ծառայողների վրա:

6. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ 60 տարին լրացած, ոստիկանության գլխավոր խմբի պաշտոն զբաղեցնող և ոստիկանության բարձրագույն կոչում չունեցող ծառայողները շարունակում են պաշտոնավարել մինչև 62 տարին լրանալը, որից հետո նրանց ծառայության ժամկետը կարող է երկարաձգվել «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 47-րդ հոդվածի 3.1-ին մասին համապատասխան, բայց ոչ ավելի, քան մինչև 3 անգամ:

**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ՝ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1068-12.05.2025, 16.06.2025-ՊԱ-011/1) ԵՎ «ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1068[1]-12.05.2025-ՊԱ-011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ**

| № | Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը | Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը | Առաջարկություն (փոփոխություն, լրացում) | Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը | Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 1. | **ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Արմեն Խաչատրյան** | **«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում նոր լրացվող 6-րդ հոդված** | Ներկայումս Ոստիկանությունում ծառայության սահմանային տարիքի երկարաձգման հնարավորություն նախատեսված է Ոստիկանությունում բարձրագույն խմբի պաշտոն զբաղեցնող, ինչպես նաև գլխավոր խմբի պաշտոն զբաղեցնող և բարձրագույն կոչում ունեցող ծառայողների համար:<br>Բացի այդ, երկարարձգման թույլատրելի ժամկետները ևս գործող կարգավորումներով տարբերակված են: Օրինակ՝ պաշտոնային գործառույթների առումով առավել ծանրաբեռնվածություն պահանջող Ոստիկանության պետի ծառայության ժամկետի երկարաձգման հնարավոր ժամանակահատվածը **մինչև 5 տարի է**, իսկ համեմատաբար նվազ | **Ընդունվել է:**<br>Կատարվել են համապատասխան փոփոխությունները: | **Ընդունվել է:** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ծանրաբեռնվածություն ենթադրող Ոստիկանության պետի տեղակալինը՝ **մինչև 3 տարի**:<br>Սահմանային տարիքի նախատեսմամբ հետապնդվող նպատակը, ըստ էության, տվյալ պաշտոնում այդ պաշտոնով նախատեսված գործառույթների արդյունավետ իրացման համար բավարար աշխատունակություն երաշխավորող հնարավոր ողջամիտ տարիքի անձանց պաշտոնավարումն է: Այս տեսանկյունից, սահմանային տարիքի երկարաձգման հնարավորությունը կոնկրետ պաշտոնի խմբի հետ փոխկապակցելն արդարացված չէ և համադրելի չէ սահմանային տարիքի և դրա երկարաձգման հնարավորություն նախատեսելու նպատակային նշանակության հետ, իսկ երկարաձգման ժամկետների տարբերակումը զուրկ է օբյեկտիվ հիմքից:<br>Ավելին, անհասկանալի տրամաբանությամբ գլխավոր խմբի պաշտոն զբաղեցնող և **բարձրագույն կոչում ունեցող** ծառայողների համար, որպես ծառայության սահմանային տարիք, նախատեսված է **60** տարեկանը, իսկ գլխավոր խմբի պաշտոն զբաղեցնող, սակայն **բարձրագույն** | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | **կոչում չունեցող** ծառայողների համար՝ **62** տարեկանը: Մեր դիտարկմամբ, սակայն, որևէ կոչումի առկայությունն ինքնին չի կարող ծառայության տարիքի տարանջատման հիմք հանդիսանալ:<br>Վերոգրյալի հաշվառմամբ՝ առաջարկում ենք նախագիծը լրացնել նոր՝ 6-րդ հոդվածով՝ գլխավոր խմբի պաշտոն զբաղեցնող բոլոր ծառայողների սահմանային տարիքը, առանց որևէ տարբերակման, նախատեսելով 60 տարեկանը: Միաժամանակ, լիազոր մարմնի ղեկավարին, այն է՝ ՀՀ ներքին գործերի նախարարին, առաջարկվում է օժտել **գլխավոր, ավագ, միջին և կրտսեր** խմբերի պաշտոն զբաղեցնող ծառայողների ծառայության ժամկետը նույնպես երկարաձգելու իրավազորությամբ: Զուգահեռաբար, առաջարկվում է հրաժարվել սահմանային տարիքի երկարաձգման հնարավոր ժամկետների տարբերակված մոտեցումից՝ բոլոր ծառայողների համար սահմանելով սահմանային տարիքի երկարաձգման միասնական թույլատրելի ժամկետ՝ **մինչև 5 տարի ժամկետով, ընդ որում՝ յուրաքանչյուր անգամ 1** | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | **տարի ժամկետով երկարաձգման հնարավորությամբ**:<br>Առաջարկվող կարգավորումը համահունչ է նաև Ոստիկանությունն արհեստավարժ և բանիմաց ծառայողներով համալրելու՝ պետության որդեգրած քաղաքականությանը: Իսկ մեկական տարով երկարարաձգելու վերաբերյալ առաջարկության հիմքում ընկած է այն տրամաբանությունը, որ սահմանային տարիքն այն ողջամիտ շեմն է՝ տվյալ կոնկրետ պաշտոնի համար, որն ընտրված է որպես այդ պաշտոնի գործառույթների արդյունավետ իրականացմանը չխոչընդոտող և բավարար աշխատունակություն երաշխավորող սահման, իսկ դրա երկարաձգման հարցում անհրաժեշտ է ցուցաբերել առավել ճկուն մոտեցում՝ խուսափելով կտրուկ երկար ժամկետով երկարաձգումից: | | |
| 2. | **ՀՀ կառավարություն** | **«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում նոր լրացվող 7-րդ հոդված** | Գործող օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի վերջին նախադասությամբ սահմանվում է, որ վեց ամիս և ավելի ժամկետով ուսման գործուղված ոստիկանության ծառայողին ոստիկանության կադրերի գործող ռեզերվում գտնվելու ամբողջ ժամանակահատվածում վճարվում | **Ընդունվել է:**<br>Կատարվել է համապատասխան փոփոխությունը: | **Ընդունվել է:** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | է նրա զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափը:<br>Այսինքն, եթե վեց ամիս և ավելի ժամկետով ուսման գործուղված և այդ հիմքով ոստիկանության կադրերի գործող ռեզերվում գրանցված ոստիկանության ծառայողը մինչ այդ **ատեստավորվել էր և դրա հիման վրա ստանում էր հավելավճար**, ապա ոստիկանության կադրերի գործող ռեզերվում գրանցվելու պահից նա **ստանալու է միայն** զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված **պաշտոնային դրույքաչափը**:<br>Նման կարգավորման պայմաններում ատեստավորված ոստիկանության ծառայողների մոտ կարող է նվազել ուսման նպատակով վեց ամիս և ավելի ժամկետով գործուղվելու ցանկությունը: Բացի այդ, գործող կարգավորումը կարող է էապես խոչընդոտել նաև ՀՀ ներքին գործերի նախարարության ուսումնական հաստատության շարունակական կրթության մոդելի պայմաններում ուսանողների համալրման գործընթացին:<br>Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք նախագծում լրացնել նոր՝ 7-րդ հոդված՝ | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | վերանայելով գործող օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի վերջին նախադասությունն այնպես, որ ապահովվի իրավական հիմք՝ ատեստավորված և ուսման գործուղվելու հիմքով ոստիկանության կադրերի գործող ռեզերվում գրանցված ոստիկանության ծառայողներին վճարելու ոչ միայն զբաղեցրած վերջին պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափը, այլ նաև՝ ատեստավորման արդյունքներով հաշվարկվող հավելավճարը, **բայց ոչ ավելի, քան այդ հավելավճարի հաշվարկման ժամկետի ավարտը**:<br>Ըստ այդմ, առաջարկում ենք նախագիծը լրացնել նոր՝ 7-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.<br><br>«***Հոդված 7.*** Օրենքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի վերջին նախադասությունում «դրույքաչափը» բառից հետո լրացնել «, իսկ սույն օրենքի 15-րդ հոդվածով նախատեսված ատեստավորումից դրական եզրակացություն ստացած լինելու դեպքում՝ նաև ատեստավորման արդյունքներով հաշվարկվող հավելավճարը, բայց ոչ ավելի, քան | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | այդ հավելավճարի հաշվարկման ժամկետի ավարտը» բառերը:»: | | |
| 3. | **ՀՀ կառավարություն** | **«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ և 7-րդ հոդվածներ** | Հաշվի առնելով այն, որ առաջարկվում է օրինագիծը լրացնել թվով 2 նոր հոդվածներով (6-րդ և 7-րդ)՝ հարկ է համապատասխանաբար վերանայել նախագծի նախկին խմբագրությամբ 6-րդ և 7-րդ հոդվածների համարակալումը՝ համապատասխանաբար դարձնելով 8-րդ և 9-րդ: | **Ընդունվել է:**<br>Կատարվել են համապատասխան փոփոխությունները: | **Ընդունվել է:** |
| 4. | **ՀՀ կառավարություն** | **«Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 7-րդ (լրամշակված տարբերակում՝ 9-րդ) հոդված** | Նկատի ունենալով այն հանգամանքը, որ առաջարկվում է նախագծում լրացնել նոր՝ 7-րդ հոդված, որով այլևս հնարավորություն է տրվելու՝ ուսման գործուղվելու հիմքով ոստիկանության կադրերի գործող ռեզերվում գրանցված և ատեստավորված ոստիկանության ծառայողներին վճարելու նաև ատեստավորման արդյունքներով հաշվարկվող հավելավճարը, այդ բարելավող նորմին հետադարձություն տալու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ առաջարկվում է միաժամանակ նախագծի 9-րդ (նախկին խմբագրությամբ 7-րդ) հոդվածում լրացնել 5-րդ մաս՝ սահմանելով, որ այդ նոր կարգավորումը տարածվում է 2025 | **Ընդունվել է:**<br>Կատարվել 1 համապատասխան փոփոխությունը: | **Ընդունվել է:** |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | թվականի մայիսի 1-ից հետո ոստիկանության կադրերի գործող ռեզերվում գրանցված ոստիկանության ծառայողների վրա:<br>Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ գլխավոր խմբի պաշտոն զբաղեցնող և ոստիկանության բարձրագույն կոչում **չունեցող** ծառայողների սահմանային տարիքը 62-ի փոխարեն այլևս սահմանվում է 60-ը, այդ կատեգորիայի անձանց համար վատթարացնող լուծումները բացառելու նպատակով առաջարկվում է սահմանել անցումային կարգավորում նախագծի 9-րդ (նախկին խմբագրությամբ՝ 7-րդ) հոդվածում՝ լրացնելով 6-րդ մաս, ըստ որի՝ առաջարկվող փոփոխություններն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ 60 տարին լրացած, ոստիկանության գլխավոր խմբի պաշտոն զբաղեցնող և ոստիկանության բարձրագույն կոչում չունեցող ծառայողները շարունակելու են պաշտոնավարել մինչև 62 տարին լրանալը, որից հետո նրանց ծառայության ժամկետը կարող է երկարաձգվել կրկին 1 տարի ժամկետով, այս դեպքում, սակայն, ոչ ավելի, քան մինչև 3 անգամ: | | |